'ի դատաւորէն հարցանել ցմեծամեծս այլազգեաց, որք էին անդ. վնասակա՞ր իցէ թէ օգտակար չինուածքն Հայոց. և ամենեքեան 'ի մի բան եւուն պատասխանի, թէ ոչ երբէք վնասակար գտանեմք, այլ մանաւանդ յօգուտ հասարակաց. և արժան իսկ է բառնալ զհակառակութիւնս դոցա և պատուիրել զի մի յարուսցեն վէճս եւ կռիւս 'ի վերայ Հայոց։ Իբրեւ բանք եղեն եւ վասն ջրհորոյն, եւ պատասխանի ճարտարապետն, եւ ասէ՝ ջրհորն ընդ չինուածոց 'ի սկզբանէ անտի 'ի ձեռս Հայոց և ժառանգութիւն նոցա է, ոչ գիւղացիք և ոչ այլք ունին զիրաւունս։ Իսկ դատաւորն յետ քննելոյ զամենայն ինչ և լսելոյ զբանս ժողովելոց անդր, և տեսանելոյ զգրեանս Հայոց, մերժեաց զհակառակութիւնս Ցունաց և գիւղացւոց, և հրամայեաց առնել զամենայն ինչ ըստ որոշման ժողովոյն։ Եւ Աստուածատուր Պատրիարք յետ առնելոյ զգիր հրամանի 'ի քաղաքապետէն, սկիզբն արարեալ չինեաց զորմն և եւ զդուռն։ Սակայն ծանր էին պայմանքն և վնասակար որք եդան, զի գիւղացիք ոչ տային հանդիստ միաբանացն Հայոց 'ի պատճառս մեռելոց իւրեանց, այլ զկնի ժամանակաց բարձաւ և խափանեցաւ ճանապարհն եւ դուռն, զորմէ ասասցուք յիւրում տեղւոջ, 'ի ١١ Ըէպիլ էվվէլ. ١٠٦٣ (1652)։ Վանք Ս. Փրկչի վանաց գոլով արտաքոյ պարսպի քաղաքին, չզերծանէր 'ի վտանգէ՝ որպէս գրեալ եմք բազում անգամ, և 'ի սմին ամի գտեալ հնարս աւազակաց 'ի գիշերի մտին 'ի ներքս, և կալեալ զմիաբանսն գան հարին ուժգին, զոմանս վիրաւորեցին եւ զայլս վտանգեցին մերձ 'ի մահ խորտակեալ զոսկերս, մինչեւ անյոյս լինել նոցա և 'ի կենաց՝ որք էին թուով 6։ Իսկ աւազակաց որոնեալ յուզեցին զամենայն սենեակս և դատարկեալ կուտեցին 'ի մի վայր զկահ կարասին՝ զոր ինչ միանգամ գտին անդ։ Այլ խորտակեցին զդուռն եկեղեցւոյն և կողոպտեցին զսպասս նորին և դատարկեցին մինչեւ չթողուլ մի ինչ 'ի նմա, եւ բարձեալ զամենայն աւարն 'ի բաց գնացին անտի։ Յառաւօտեան պահու ազդ արարին զեղեալսն Աստուածատուր Պատրիարքին, և նա 'ի ձեռն թարգմանին իւրոյ ծանոյց զիրս դատաւորին. և նորա առեալ զքաղաքապետն Մուստաֆայ Փաշայ եւ զմեծամեծս քաղաքին գնաց 'ի վանս